

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

23 սեպտեմբերի 2023թ.
ք. Երևան

N 62-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽԱՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
20.09.2023թ. ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության 20.09.2023թ. դիմումը, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում մուտքագրվել է 21.09.2023թ.՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուների իրավական դիրքորոշումները և ներկայացված պահանջները

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցության 20.09.2023թ. N ԺՀ/01/05-2023 դիմումում նշված է.

«Հիմք ընդունելով Ձեր կողմից 18.09.2023թ. N 01-583 նամակ-պատասխանը մեր կողմից ՀՀ ԿԸՀ 16.09.2023թ. ներկայացված դիմումի, հայտնում եմ, որ՝ լիարժեք տեղեկացված լինելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) ընտրական հանձնաժողովներ դիմում ներկայացնելու սահմանված ժամկետներին, մենք որոշում ենք կայացրել ներկայացնել դիմումը հետևյալ հիմքով.

Քանի որ Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 11-րդ մասի առաջին պարբերության համաձայն դիմումը պետք է ներկայացվի ուշ, քան քվեարկության օրվանից երկու օր առաջ մինչև ժ. 18:00, սակայն մեր կողմից ներկայացված դիմումի առանցքային խնդիր հանդիսացող և Ընտրական օրենսգրքի Հոդված 23-ի կոպիտ խախտում հանդիսացող, մեջբերում. «ՀՀ Ընտրական օրենսգրքի հոդված 23, կետ 1 (1) խախտում, այն է՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հանդես գալով Քաղաքացիական Պայմանագիր կուսակցության նախընտրական քարոզարշավին քարոզչությունն իրականացրել է հանդես գալով բռնության և ատելության բացահայտ կոչերով, պաշտոնական դիրքի կոպիտ չարաշահմամբ՝ Քաղաքացիական Պայմանագիր կուսակցության թեկնածուին և ընտրություններին մասնակցող Քաղաքացիական Պայմանագիր կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի և անուղղակի կոչերով՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար»: Գործողությունը տեղի է ունեցել քվեարկության օրվանից երկու օր առաջ ժ. 19:00-ից հետո, ինչն արդեն ենթադրում էր, որ որևէ պարագայում տվյալ իրավախախտման վերաբերյալ ցանկացած դիմում չէր կարող ներկայացվել ԿԸՀ մինչև ժ.18:00:

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ օրենքով, օրենսդրական ժամկետը բաց թողնելը պետք է հարգելի համարվի, հաշվի առնելով, որ հիմքը առաջացել է ավելի ուշ: Հոդված 71 կետ 2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի: Բողոքարկման ժամկետը կարող է վերականգնվել հարգելի պատճառով բաց թողնվելու դեպքում: Բողոքարկման ժամկետի բաց թողնելը հարգելի համարելու հանգամանք կարող է դառնալ վարույթի մասնակցից անկախ պատճառներով բողոքարկման ժամկետը բաց թողնելը:

Հետևաբար, ԿԸՀ օրենքի ուժով չի կարող խնդրո առարկա դիմումը համարել ուշացած և խոչընդոտ ստեղծել անպատիժ և անհետևանք թողնելու համար Ընտրական օրենսգրքի Հոդված 23-ի կոպիտ իրավախախտումը, հատկապես հաշվի առնելով այս իրավախախտման ծանրացուցիչ հանգամանքները, պայմանավորված իրավախախտումն իրականացրած անձի պաշտոնով, այն է՝ ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնով պայմանավորված սահմանափակումներով: Նիկոլ Փաշինյանը ելույթ ունենալով որպես Զաղաքացիական Պայմանագիր կուսակցության նախագահ չարաշահել է իր պաշտոնեական դիրքը՝ բացահայտ հանրային ատելության և բռնության կոչեր և սպառնալիքներ հնչեցնելով, այսպիսով կատարելով մի շարք իրավախախտումներ, այդ թվում Ընտրական օրենսգրքի Հոդված 23-ի կոպիտ խախտում:

Խնդրում եմ անհապաղ միջոցներ ձեռնարկել դիտարկելու մեր դիմում-բողոքը և օրենքով սահմանված ժամկետում իրականացնել ԿԸՀ-ին օրենքով տրված լիազորությունների սահմանում անհրաժեշտ գործողությունները Ընտրական օրենսգրքի խախտումներին տալով պատշաճ գնահատական և դիմելով դատական մարմիններին օրենքի տառին համապատասխան: Մենք հետամուտ ենք լինելու օրենքի ողջ ուժով տվյալ իրավախախտումն իրականացրած անձին և քաղաքական խմբին պատասխանատվության կանչելու գործում:

Անդրադառնալով մեր կողմից ներկայացված դիմումի ժամկետին, ևս մեկ անգամ նշեմ, որ դիմումը ներկայացվել է ԿԸՀ Էլեկտրոնային փոստի միջոցով 16.09.2023թ. (Էլ փոստի տպագիր տարբերակը առդիր), սակայն անհասկանալի պատճառով մուտք է արվել որպես 17.09.2023թ. ներկայացված:»:

Դիմումը ստորագրված է կուսակցության ղեկավար՝ Սուրեն Պետրոսյանի կողմից:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատճառաբանությունները, հիմնավորումները և եզրահանգումը

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Նշված իրավակարգավորումը հստակ սահմանում է վարչական վարույթի իրականացման կարգը՝ ամրագրելով, որ Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան այնքանով, որքանով Ընտրական օրենսգրքով ընտրական գործընթացի համար առանձին կարգավորումներ և ժամկետներ նախատեսված չեն: Այս կարգավորումը բխում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի տրամաբանությունից, որի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է՝ «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:»:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածով հստակ սահմանված են դիմում ներկայացնելու կամ բողոքարկելու ժամկետները և, հաշվի առնելով ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլի համար ընտրական օրենսդրությամբ նախատեսված սեղմ ժամկետները, որն ընտրական գործընթացի առանձնահատկություններից է համարվում, օրենսդիրն ընտրական գործընթացում բաց թողնված ժամկետի վերականգնման ինստիտուտ չի սահմանել այն հաշվառմամբ, որ ընտրական գործընթացներում ժամկետը բաց թողնելը ոչ միայն ակտը դարձնում է անբողոքարկելի, այլ նաև բողոքարկումը դարձնում է սպառնալից:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգավորումների հիմքում դրված վերը նշված տրամաբանության հաշվառմամբ է Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված.

«Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում կարող է ներկայացվել միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով: Դիմումը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումը ընտրական հանձնաժողովը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է ընդունում դիմումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 12-00-ն:

Սույն մասի առաջին պարբերությամբ նշված որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան 3 օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն: Վարչական դատարանը որոշում է կայացնում 5 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը:»:

Օրենսդիրը նման ժամկետներ է սահմանել այն հաշվարկով, որ մինչև քվեարկության մեկնարկն ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և նրանց ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ցանկը որոշակի լինի: Ակնհայտ է, որ ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի

գրանցումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումը նշված ժամկետներից ուշ ներկայացվելու դեպքում դիմումի ուսումնասիրությամբ որոշում կայացնելն այլևս դառնում է ոչ նպատակահարմար: Վերոգրյալով պայմանավորված՝ որ ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումը վերջնաժամկետից ուշ ներկայացվելու դեպքում ժամկետը բաց թողնելու հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է մերժման, քանի որ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումի պահանջն արդեն իսկ սպառված է:

Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դիմողը դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը: Եթե դիմում տալու համար սույն օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով: Ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումները կամ **վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը:**»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ վերջնաժամկետից ուշ ներկայացված «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության 16.09.2023թ. N ԺՅ/01/04-2023 դիմումն իրավաչափորեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 18.09.2023թ. N 01-583 գրությամբ վերադարձրել է դիմումատուին՝ նշելով պատճառները:

Վերոգրյալի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումը վերադարձնելու մասին գրությունն իրավաչափ է, կայացվել է Ընտրական օրենսգրքի պահանջների պահպանմամբ, գտնում է, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է դիմումում վկայակոչված այն հանգամանքին, որ «դիմումը ներկայացվել է ԿԸՀ Էլեկտրոնային փոստի միջոցով 16.09.2023թ. (Էլ փոստի տպագիր տարբերակը առդիր), սակայն անհասկանալի պատճառով մուտք է արվել որպես 17.09.2023թ. ներկայացված», Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարկ է համարում նկատել, որ Ընտրական օրենսգրքի «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության 16.09.2023թ. N ԺՅ/01/04-2023 դիմումը Էլեկտրոնային փոստի միջոցով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին է ուղարկվել 2023 թվականի սեպտեմբերի 16-ին՝ ժամը 22:05-ին:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ ընտրական հանձնաժողովներ քվեարկության նախորդ օրը դիմում կարող է ներկայացվել ժամը 9.00-ից մինչև 19.00-ն: Ընտրական հանձնաժողովները քվեարկության նախորդ օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 16-ին, հերթապահել են մինչև ժամը 19:00-ն, և այդ ժամանակահատվածում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության 16.09.2023թ. N ԺՅ/01/04-2023 դիմումը չի ստացվել, ուստի չէր կարող մուտքագրվել: Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) Եթե դիմում տալու համար սույն օրենսգրքով նախատեսված է

վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով: (...)»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության 16.09.2023թ. N ԺՅ/01/04-2023 դիմումը մուտքագրվել է 2023 թվականի սեպտեմբերի 17-ին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստում է, որ գործել է Ընտրական օրենսգրքով սահմանված իրավասությունների շրջանակներում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության 20.09.2023թ. դիմումը մերժել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Վ. Հովակիմյան